

տաքսէ էր եւ ունէր երեք հարիւր ոտք երկարութիւն եւ հարիւր յիսուն ոտք լայնք: Սուլթաններէն բնակուած եգիպտական պալատներուն բոլոր սենեակներն ալ կը պարունակէին մետաքս գորգեր եւ զիպակներ, եւ Սիւրիոյ մզկիթներն ալ նման կերպով զարդարուած էին: Քրիստոսի 1067 թուականին խալիֆաներէն մէկը բռնադատուած էր ծախել իր գեղարուեստական գանձերը, որոնք բացի գոհարեղէններէ եւ գեղարուեստական իրերէ՝ կը բաղկանային չորս հազար կապոց կապերաներէ: Տր. Մարթին կը յայտարարէ որ այս կապոցներէն մէկը կը պարունակէր քանի մը հարիւր կառարեալ գորգեր, որոնք հիւսուած էին մետաքսով եւ ոսկիով, եւ ոմանք կը կրէին պատկերները ամբողջ արքայական ընտանիքին: Անոնցմէ մէկուն, իբր արժէք նշանակուած էր մօտաւորապէս 300,000 տոլար, շինուած էր Միւրդ Իլ-Ալլա խալիֆային համար, Քրիստոսի 964 թուին: Կապոյտ մետաքս էր, որուն վրայ պատկերացուած էր երկինք եւ երկիր, գետեր եւ ծովեր, ինչպէս նաեւ Մէքքէ եւ Մետինէ սուրբ քաղաքները: Այսպէս էին խալիֆաներուն օրերուն շինուած գորգերուն ոմանց նկարները»:

«Եւ որովմեանեւ անկատար յիշատակութիւնները, որոնք մեզի թողուած են, ցոյց կու տան որ լաւագոյն գորգերու հաւաքածոները այս շրջանին կը գտնուէին Եգիպտոսի եւ Սիւրիոյ պալատներուն եւ մզկիթներուն մէջ, ենթադրուած է որ անոնք հոն գործուած են բնիկ արհեստաւորներէ: Ասիկա մասամբ անտարակուսելի կերպով ճիշդ է, քանի որ գորգաշինութիւնը այս երկիրներուն հնագոյն արհեստներէն մին է: Բայց աւելի հաւանական է որ անոնք մեծագոյն մասով ուրիշ տեղ շինուած եւ ձեռք բերուած էին իբր նուէր կամ ծախու առնուելով: Ոմանք շինուած էին Հայաստան, Ասորեստան եւ Թուրքեստան, բայց մեծագոյն թիւը եւ նաեւ ամէնէն արժէքաւորները եւ ճոխերը, անկասկած բերուեցան Պարսկաստանի այն քաղաքներէն եւ բարձունքներէն, ուր այսօր ալ լաւագոյն կտորներուն շատերը կը հիւսուին»⁽⁵⁰⁾:

Բնական է, հեղինակը հոս կ'ենթադրէ որ Պարսկաստանի մէջ շատ վաղ ժամանակներուն այդքան նուրբ եւ ճոխ գորգեր կը շինուէին: Անտարակոյս Պարսկաստանն ալ իր բաժինը ունէր Եգիպտոսի խալիֆաներուն գորգերու ճոխ եւ մեծ հաւաքածոներուն մէջ, սակայն անտարակոյս ոչ գլխաւոր բաժինը:

Կասկած չկայ որ Եգիպտոսի խալիֆաներուն մասնաւորաբար ֆաթիմեան շրջանն է որ ճոխութեան գաղաթնակէտին հասած է: Վերը, 1067ին յիշուած խալիֆան, տէր մեծ գեղարուեստական իրերու եւ գոհարեղէններու, ինչպէս նաեւ չորս հազար կապոց կամ հակ գորգերու, էլ Մուսթանսըր խալիֆան էր, որուն օրով կար մեծ հայ գաղութ մը Եգիպտոսի մէջ, եւ որուն վէզիրը եղաւ Պատր Էլ-Կամալի Ամիր Էլ-Ճիւլուշ հայազգին, շինարար եւ բարեկարգիչ Ե-

(50) Oriental rugs. — 1927, New York, p. 76-77.